

ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴ. ՎԱՐԺԱՐԱՆԻ

ԵՐՈՒՍԱՂԷՍ

1986 - 1987

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպս. Տէրաէրեան,

Բարեխնամ Պատրիարք

Առաքելական Ս. Աթոռոյ

Գերաշնորհ և Հոգեշնորհ Հայրեր

և յարգելի ներկաներ,

Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի դպրոցական տարեվերջին առիթով, Ձերդ Ամենապատուութեան, մեր կրթական հաս. տառութեան բոլոր նուիրատու բարերարներուն և մեր վարժարանի բարեկամներուն կը ներկայացնենք մեր դպրոցի կրթական - տնտեսական - բարոյական տեղեկագիրը, որ հետեւեալն է -

Տարւոյս ընթացքին մեր աշակերտութեան ընդհանուր թիւը եղաւ 160, բաժնուած հետեւեալ ձևով. -

	Մանչ	Աղջիկ	Գումար
Երկրդ. կարգեր	17	43	60
Նախակրթարան	32	26	58
Մանկապարտէզ	28	14	42
Համագումար	77	83	160

Միջին տարիքը մեր աշակերտութեան եղաւ երեքէն մինչև տասնեօթ տարեկան: Ինչպէս անցեալին՝ այս տարի ևս չունեցանք կարգապահական դժուարութիւններ: Ընդհակառակը, այս տեսակէտէն մեր աշակերտութեան համար ունինք գնահատանքի խօսքեր:

Իսկ մեր ուսուցչական կազմը բաղկացած եղաւ 24 որակաւոր ուսուցիչներէ, որոնք սիրալոյսով բերին իրենց ծառայութիւնը մեր դասկներու դաստիարակութեան գործին: Փորձառու ուսուցիչներ են բոլորն ալ, որոնց գրեթէ կէսը նաև ուսուցիչներ են տեղւոյս լաւագոյն տար վարժարաններուն մէջ: Այս առթիւ

իրենց համար ունիմ գնահատանքի և շնորհակալութեան խօսք:

Մեր ուսուցչական - կրթական ծրագիրը ընթացաւ յարեման անցեալ տարիներու ծրագրին: Սկսելով Մանկապարտէզի Մաղիկ դասարանէն մինչև աւարտական դասարան ուսուցինք չորս լեզուներ. - Հայերէն, Իր Աշխարհարար և Գրարար ճիւղերով, Անգլերէն, Երբայերէն և Արաբերէն: Նախակրթարանի մէջ գիտութեանց և պատմական դասերու լեզուն եղաւ Հայերէնը: Երկրորդական կարգերու մէջ հայագիտական դասերը (Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Կրօն, Մատենագրութիւն, Հայ Արուեստից Պատմութիւն) ուսուցուցանւում էր Հայերէնով, իսկ գիտական դասեր՝ Անգլերէնով (Գիտութիւն, Տարրալուծութիւն, Կենսաբանութիւն, Բնալուծութիւն, Պատմութիւն, Թուարանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն):

Մեր Երկրորդական կարգերու ոչ - հայկական ճիւղերու ուսուցման համար դարձեալ հետեւեցանք Անգլիական General Certificate of Educationի (G. C. E.) միջազգայնօրէն ճանչցուած ծրագրին, որպէսզի մեր աշակերտները մեր վարժարանը աւարտելէ յետոյ կարենան մասնակցիլ սոյն Անգլիական G. C. E.ի քննութեանց, առ ի դիւրութիւն իրենց համալսարան մուտքին:

Մեր դպրոցական կիսամեայ քննութիւնները տեղի ունեցան Յունուար 2-12ին, իսկ ամառվերջի քննութիւնները Մայիս 18-30ին:

Սոյն քննութիւններէն յետոյ, այս տարի մեր վարժարանի աւարտական վկայականին կ'արժանանան 6 աշակերտներ, որոնք հետեւեալներն են. -

Լևոն Տիբուխյան
Խաչիկ Պողոսյան
Արտա Գարազանյան
Թալին Սառազյան
Վիթի Աճեմյան
Քրիստին Պեննինգտոն

Մեր շրջանաւարտները և մեր այս տարւոյ երկրորդական Դ. դասարանի աշակերտներ մասնակցեցան G. C. E. թննութեան, որոնց արդիւնքները ստացած կ'ըլլանք մինչև 1987 Սեպտեմբեր, և կը յայտարարենք յաջորդ տարւում մեր Տեղեկագրով:

Մեր այսօրուան հանդիսութիւնը, ինչպէս կը տեսնէք, նախատեսուած է Մովսէս Խորենացի մեծ պատմաւոր մահուան 1500-ամեակին, որուն գլխաւոր դերակատարներն են մեր շրջանաւարտ սաները, և որոնք այնքան լաւ կատարեցին իրենց սահմանուած պարտականութիւնը:

Անցեալ կիրակի, 31 Մայիս, կէսօրէ յետոյ տեղի ունեցաւ մեր Մանկապարտէզի Ամովերջի Հանդէսը, ուր 13 մանուկներ ստացան Մանկապարտէզի աւարտական վկայականները, անցնելու համար Նախակրթարանի բաժին:

Անցեալ տարւոյ մեր շրջանաւարտներէն անոնք որոնք մասնակցած էին G. C. E. թննութեան, հետեւեալ արդիւնքները բերած են. —

Փերուզ Տիբուխյան՝ Հայերէն Գրաբար (Advanced Level) և Աշխարհաբար (Ordinary Level), և Արաբերէն (A. L.), Պատմութիւն և Քիմիաբանութ. (O. L.):

Կարինէ Գաբլանեան՝ Հայերէն Գրաբար (A. L.) և Աշխարհաբար (O. L.), Արաբերէն (A. L.) և Անգլերէն (O. L.):

Հրաչ Տէմիրճեան՝ Հայերէն Գրաբար (A. L.) և Աշխարհաբար (O. L.), Արաբերէն (A. L.), Մաթեմատիք՝ 3 ճիւղերով (O. L.): Ուիլիամ Ղազի՝ Հայերէն Գրաբար (A. L.) և Աշխարհաբար (O. L.), Արաբերէն (O. L.):

Անցեալ տարւոյ մեր երկրորդական Դ. դասարանի աշակերտները, որոնք այս տարւում մեր ընթացաւարտ վերոյիշեալ վեց սաներն են, յաջողած են Արաբերէն լեզուի Ordinary Level թննութեան մէջ:

Անդրադառնալով մեր այն շրջանաւարտներուն, որոնք կ'ուսանին համալսարաններու մէջ, անոնց թիւը այսօր 12 է: Անոնցմէ հինգը կ'ուսանին Հայաստանի Պետական Համալսարանին մէջ (Շահան Ռաճոյեան, Յակոբ Սահակեան, Պողոս Զաւառչեան, Խաչիկ Տէր Վարդանեան և Շողիկ Պոյաճեան), հինգը Ամերիկայի մէջ (Կալինա Օհաննէսեան, Քնար Օհաննէսեան, Սեան Մարտիրոսեան, Յակոբ Տիգրանեան և Հրաչ Տէմիրճեան), իսկ երկուքը Երուսաղէմի մէջ (Փերուզ Տիբուխյան և Նայիրի Տէր Վարդանեան): Յաջող աշակերտներ են բոլորն ալ և իրենց ջանասիրութեամբ պատիւ կը բերեն մեր վարժարանին: Անոնցմէ յատկապէս յիշատակութեան արժանի կը նկատեն Յակոբ Տիգրանեանը, որ կ'ուսանի Պոսթընի North Eastern համալսարանին մէջ և իր շատ յաջող ընթացքին համար արժանացած է «Dean's List with Honor» քանահատանքին համալսարան տեսչութեան կողմէ:

Այս տարի, մեր շրջանաւարտները Յակոբ Սեան աւարտեց Բիթղեսէմի Համալսարանը Business Administration B. A. մասնագիտութեան վկայականով: Դարձեալ մեր շրջանաւարտներէն Նայիրի Լէփէճեան վկայուած է Սիտիի պետական համալսարանէն Civil Engineering M. B. A. տիտղոսով:

Մեր կրթական-ուսումնական աշխատութիւններուն և մտահոգութիւններուն մաս կազմեց նաև կրօնական-բարոյական դաստիարակութիւնը մեր աշակերտներուն: Ասոր համար, մեր կրօնքի և Հայ Եկեղեցւոյ պատմութեան ամէնօրեայ դասընթացքներուն քովն ի վեր, տօնական օրերուն անոնք մեր կողմէ առաջնորդուեցան եկեղեցի և թէ՛ աղջիկներ և թէ՛ տղաք մասնակցեցան մեր արարողութիւններուն իբրև երգիչ զպիւրներ: Իսկ տաժին երկիցս, Ս. Ծննդեան և Ս. Զատիկի տօններուն, անոնք մասնակից դարձան նաև Ս. Հաղորդութեան Խորհուրդին:

Աղջիկներու համար ունեցանք նաև մարզանքի և ձեռագործային աշխատանքի պահեր, վերահսկողութեամբ մեր ուսուցչական կազմէն Օր. Ռօպէրթա Ըրվինի:

Բոլոր անոնք, որոնք ներկայ եղած էին մեր տարեկան Պաշտոնի առիթով սոյն ձև-առաջորդներու վաճառ-ցուցադրութեան, միահամուռ կը վկայէին ընտիր ճաշակն ու յաւելեալ որակն ու քանակը մեր ձև-առաջորդներուն, որոնց նիւթեղէնին համար մեր ծախքերը իջած էին նուազագոյնին, որովհետեւ Օրիորդին նախա-ձեռնութեամբ, ուսումնասէր անհատներ նուիրած էին նիւթեղէններու կարեւոր մասը, որոնցմէ շնորհակալութեամբ յիշատակելի է յատկապէս Ամերիկայի Little Rock քաղաքէն Տիկին Ռիթա Փլամբըրը և Pandora's Closet in Dalas վաճառատունը:

Վերոյիշեալ ձեռնադրոյնները այս տարի ևս գլխաւոր առանցքը եղան մեր տարեկան Պաշտոնին, որ տեղի ունեցաւ 23 և 24 Մայիս, Շարաթ և Կիրակի օրերուն: Պաշտոնը ունեցաւ նաև իր խրախճանքի և ընկերային ժամանցի բաժինը: Պաշտոնի հասոյթը պիտի երևի մեր յաջորդ տարւոյ տեղեկագրին մէջ, երբ ամբողջանան մեր զանձումները:

Խրախճանքի և ընկերային ժամանցի ուրիշ զեղեցիկ օր մը եղաւ նաև մեր Նոր Տարւոյ խրախճանքի օրը, 28 Դեկտեմբերին, որուն գլխաւոր առանցքը եղաւ մեր Մանկավարժէզի մանուկներուն երգի,

պարի և արտասանութեան ելոյթները: Կաղանդ պապան բաժնեց իր նուէրները մեր փոքրիկներուն, որոնց մէկ կարեւոր մասը յատկացուած էր Էվէթթէն՝ Օր. Արաքսի Թաշճեանէն, որուն այս առթիւ կը յայտնենք մեր զգածուած շնորհակալութիւնները և բազում նոր տարիներու մաղթանքը: Զեռնարկին հասոյթը եղաւ 2850 Շէքէլի գումար մը (մօտ \$ 1810):

Տարւոյս ընթացքին մօտ հինգ շաբաթալսութիւններ, պատմական վայրերու և հաստատութիւններու այցելութիւններ և շրջապատյոյններ կազմակերպուեցան մեր աշակերտներուն համար, առաջնորդութեամբ մեր ուսուցիչներէն Պր. Միսաք Յակոբեանի և Օր. Ռօպէրթայի:

Շնորհակալութեամբ կը յիշատակենք որ այս տարի The British Councilի Արեւելեան Երեսօղէմի մասնաճիւղը 514 Սթերլինկի արժողութեամբ Անգլիերէն գրքեր նուիրելով շատ շօշափելի օժանդակութիւն մը ըրած եղաւ մեր դպրոցական գրադարանին:

Մեր ուսումնական-կրթական տեղեկատուութիւնէն յետոյ, այստեղ կը ներկայացնենք մեր վարժարանի տնտեսական-եւկամական տեղեկագիրը որ հետեւելն է.

ՀԱՇՈՒԵԿՇՈՒ ԵՒԵԻՄՏԻՅ Ս. ԹԱՐԴԱՆԶԷՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

1986 Յունիս 1 — 1987 Մայիս 31

Մ Ո Ւ Տ Ե

	ԸՍԲ. ՇԷՊԷԼ
Պատրաստ ի դրամարկղ նախորդ դպրոցական տարեշրջանէն փոխ.	22,040
Նուիրատուութիւններէ	136,225
Աշակերտական տարեթոշակներէ	26,884
Դասագիրքերէ, տետրակներէ, վիճակացոյցներէ (զուտ շահ)	4,665
Հաստութեան ձեռնարկներէ (հանգէսներ - խրախճանք)	3,070
Օրացոյցներէ և վերաքննութեանց տուրքերէ	1,920
Ս. Թարգմանչաց Հիմնադրամի նուիրատուութիւններ	
Տէր և Տիկին Արմէն և Նէլլի Զիննօգեաններէ (10,000 Տօլար)	15,000
Տետր Վարդգէս Երէցեանէ (4,000 Տօլար)	6,000
Տէր և Տիկին Արտաշէս և Սօնիա Սարեաններէ (6,000 Տօլար)	9,300
	225,104

Ե Լ Պ

ԻՍՐ. ՀԷԳԷԼ

Ամսական քաղաքային և գյուղական	155,979
Դասագրքեր և տետրեր	96
Գրական պատճառ	768
Թղթակցություններ	1,313
Զեռագործի ներկայացում	100
Մանր ծախս և մտքորոշում	558
Տպագրական և հանդիսական ծախսեր	342
Շինարարական և կառուցարարական և կառուցողական ներդրումներ	998
Բացառիկ ծախսեր և պատճառներ	
(Տարրադասարանի աշխատքեր, համագործակցություն և այլն.)	1,184
Դպրոցի ինքնաշարժիկ ապահովագրություն	400
Որպես տնտեսական և ֆինանսական ծախսեր	
Տեղ և Տիկին Արտաշես և Սոնիա Սարգսյաններու նուիրումը (6,000 Տոլար)	9,300
Տիար Վարդգէս Երեցեանի նուիրատուութիւնը (4,000 Տոլար)	6,000
Տեղ և Տիկին Արմէն և Նէլլի Զինեօգեաններու նուիրումը 10,000 Տոլար)	15,000
	192,037
Պատրաստ ի դրամարկդ, որով պիտի վճարուին ամսականներ	
արձակուրդի ամսականներու ամսականներ	33,067
	225,104

Այս հաշուետուութեան առթիւ հետեւեալ պարագաները կը յանձնենք մեր ընթերցողներու ուշադրութեան. —

1. — Դպրոցական տարւոյն ընթացքին Տոլարին արժէքը տարուերեւեցաւ 1.45 — 1.55 Իսրայէլեան Շէքէլի միջև:

2. — Մեր մեծագումար նուիրատուներու նուիրատուութիւնները նշանակած ենք Տոլարով շնորհակալութեանց բաժնին մէջ:

Դպրոցական տարւոյս վերջաւորութեան, Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի Հիմնադրամը, նոր նուիրատուութիւններու և տոկոսներու յաւելումով հետեւեալ պատկերը ստացած է. —

Ամերիկեան Տոլար

Տիար Վարդգէս Երեցեանէ հաստատուած «Էլվիր Երեցեան Հիմնադրամ»	51,597,51
Տեղ և Տիկին Արտաշես և Սոնիա Սարգսյան Հիմնադրամ	
ի յիշատակ իրենց մօր Արշալոյսի և Տիար Կոպեռնիկ Սէֆէրեանի	33,292,01
Տիար Էտուարտ Սէֆէրեան և Տիկին Արթինէ Վարդպարոնեան Հիմն. ի յիշատակ իրենց մօր՝ Տիկին Քէթրին Սէֆէրեանի և ամուսնոյն՝	
Տիար Դէորդ Վարդպարոնեանի	27,016,47
Տեղ և Տիկին Արմէն և Նէլլի Զինեօգեան Հիմնադրամ	10,000,00
Մի ոմն բարերարէ մը	1,000.00
Համագումար Ս. Թ. Վ. ի տնտեսական և ֆինանսական	122,905,99

Ինչպէս կը տեսնեն մեր Տեղեկագրի ընթերցողները, մեր հաշուեկշիռն ժուռքի բաժնին մէջ, մեր դպրոցական եկամուտի գլխաւոր աղբիւրը նուիրատուութիւններն են, կատարուած արտասահմանի մեր ազգասէր և կրթասէր բարեկամներէն, Առանց անոնց բարոյական և տնտեսական ձեռնառութեան, մեր կրթական գործն ու ճիշդ պիտի մնային կիսատ ու թերի: Մենք մեր աշակերտներով միասին կը մնանք խորապէս երախտապարտ այդ բաւոր ազնուական հոգիներուն, որոնց բարօրութեան և նըշանկութեան համար կ'աղօթենք սրտովին: Թող աստուածային շնորհներով տառապանք անոնց տունն ու կայքը: Ստորեւ կու տանք անոնց անուններն ու նուիրատուութեանց գումարները:

ԱՄԵՐԻԿԱՅԷ

	Ե Ե Բ Ե Լ
Տէր և Տկ. Ալեքս և Մարի Մանուկեան	9,200
Սուրէն և Վերժին Ֆէսեան	9,100
Հասուրտ Գարակէօղեան Հիմնարկի.	7,750
Երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներու Ընկերակցութիւն	6,200
Տէր և Տիկին Զարեհ Փօլ Պատուկեան	3,625
Ռիչըրտ Կրէկօրի	3,370
Եղուարդ և Սթըմի Փանոսեան	2,100
Հ. Բ. Ը. Մ. — Թորոսեան Հիմնադրամ	1,550
Եղուարդ և Հէլէն Մարտիկեան	1,550
Համասերաստանայ Վերաշ. Միութիւն.	1,500
Ս. Թ. Վարժարանի Նախկին սաներ	1,440
Գրիգոր և Սոնիա Ասատուրեան	1,400
Ռիչըրտ և Կլօրիա Մահտեսեան	1,400
Տքթ. և Տիկին Էտմոնդ Կորէք	1,290
Օր. Քարէն Տէտերեան	1,020
Էլէրէթ Հ. Պէրպէրեան	700
Թովմաս և ձողէֆին Հարրիս	560
Տիգրան Մարիեան	540
Հանգ. Աբշա Սարգիսեանի ընկերներ (փոխան ծաղկեպսակի)	525
Տիկին Ադնէս Պոսթոնեան	450
Տիկին Սրբուհի Զաւրգեան	450
Ժագ Զաւրգեան	440
Անի և Նոյեմի Պէրպէրեան	435
Մայք և Հէլկա Փարթայեան	420
Օթլէնտի Տիկնանց Միութիւն	420
Ֆէյրլուուի Ս. Ղեռնդ Եկեղեցի	375
Օր. Արաքսի Թաշեան	355
Հէրրի Աթօր	350
Էտուրտ և Լիլի Աղապապեան	310
Վէյ Կինս Կաղմակերպութիւն	310
Փիթըր Սարմանեան	310
Մարթին և ձոյս Քիտոսեան	300
Տիկին Տիգրանուհի Մելիքեան	300

Տիկին Արմիթթէ Սթալէյ-Ամէթեան	300
Արթ. Տք. Սթանֆորտ Լիք և Իր Խուճըր	300
Աննա և Արամ Հինգլեան	285
Հայկ և Հերմինէ Գաղէղեան	280
Խարերգի Հայրենից. Միութիւն	280
Տքթ. և Տիկին Ֆրանսիս և Ուիլհէլմինա Ուիլհէլմ	280
Սէմ և Մելինէ Գալֆայեան	280
Տիկին Մարիցա Նիկողոսեան	280
Տիկին Վալէնթին Պ. Սթալ	230
Նշան Մանարեան	210
Տէր և Տիկին ձօն Նորայեան	210
Սաքրամէնթայի Տիկնանց Միութիւն	210
Ուիլմըր Հ. Պիր	180
Տիկին Էլէլին Էքմէքեան	173
Ռայթթ Համիլթըն-Քէլի	170
Տիկին Հռուբ Ասլանեան	155
Սէմ և Զեփիլա Գալլընեան	155
Տքթ. Ալեքսան Ասատուրեան	155
Օր. Նոյեմի Պէրպէրեան	155
Տիկին Լիտիա Պետրոսեան	155
Հայ Օգնութեան Շրջանակ, Գալիֆ.	150
Ֆէյրլուուի Տիկնանց Միութիւն	150
Հրաչ և Պէնիթա Մարգարեան	150
Ուստրի Երիտ. Տիկնանց Միութիւն	150
ԵճՏՄի Տիկնանց Միութիւն	150
Պէրրի Զօրթեան	150
Վահէ Զօրթեան	150
Հէրիսընի Ս. Յակոբ Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Վարժարան	150
Տիկին Մելինէ Գապարեան	150
Սաքրամէնթայի Երիտ. Տիկ. Միութիւն	150
Տքթ. և Տիկին ձօրն Քիւրանեան	145
Տքթ. Ալեքս Ասատուրեան	145
Վահրամ և Տիանա Քէլպապեան	145
Լէ Րօյ և Ֆէրն Դէրպեան	144
Նազարէթ և Մարգրիտ Աղաբեան	144
Հայկ Ֆ. Խանճեան	144
Տքթ. Բերկուհի Սօմանեան	144
Տէր և Տիկին ձէյմզ ձըսրալի	140
Սուրէն և Մարի Տանիէլի	140
Տիկին Սիրվարդ Գաւուքոսեան	140
Տիկին Լուսի Թօմպալագեան	140
Տքթ. ձէքի Հարրիս	140
Օր. Էլիզապէթ Եամբրեան	140
Անէմեան Մեքենակաւ Ընկ.	140
Տիկին Էլիզապէթ Սէրեան	140
Լեռն և Թագուհի Պալեան	140
Տիկին Լուսի Քօչեան	140
Միքայէլ և Նաթալի Մահտեսեան	140
Ֆէյրլուուի Ս. Ղեռնդ Եկեղեցւոյ Տիկնանց Միութիւն	140
Եղուարդ և Ալիս Սլափ	140
Ռիչըրտ և Ասլէն Պէյլէրեան	140
Տիկին Աշլէն Ուիթսէն	140
Տէր և Տիկին Սուրէն Արաւամեան	140
Տիկին Արտեմիս Նազարեան	140
Տիկին Արմենուհի Կօփիկեան	119
Տէր և Տիկին Ռայթթ Խաչատուրեան	116

Ֆելլուսունի Ս. Ղևոնդ երեցներու
կազմակերպութիւն

Թոնէր Սէրեան
Կիրականօրեայ վարժարան, վան Նիւս
Տիկին ձուլիւս Արոյեան
Այտա և Գարլ վարատեան
Տիկին Հայկունի Գարակէօզեան
Թէնէֆլայի Տիկնանց Միութիւն
Լէօնարտ և Սառա Արդուսմանեան
Գարլ և Այտա վարատեան
ձորճ Կէտերեան
Օր. Տանա Մարթինշ
Տիկին Ֆիլիս Մարթինշ
Եղեմի Տեարց և Տիկնանց Միութիւն
Եղեմի Կիրականօրեայ վարժարան
Եղեմի Հայ Եկզգ. Երզնայիսումբ
Եղեմի Ա. Շ. Մ. Օ.
Եղեմի Երանկան Խորհուրդ
Կարօ և ձոյս Զուսմանեան
Սթիվ Ա. Զօրթեան
Տէյվիտ Ըրվին
Հէրրի Կարապետեան
Եղուարդ և Պէրթա Գաղանճեան
Լէօնարտ և Սառա Արդուսմանեան
Տիան Թ. Փօսկրօյ
Արմինէ և Պերճ Արադ
Սամուէլ Յակոբեան
Էրնէսթ Թ. Շարփ
Օր. Տէպի Ռօզինօլ
Զարլզ Կարոյեան
Մարկոս Մարութեան
ձօն և Քուին Փաշայեան
ձօն Լ. Մուշեան
Տէր և Տիկին Օկիւսթուս Պարպր
Արնի Աւետեան
Տքթ. Միքայէլ Առաքելեան
Տէր և Տիկին Գալուստ Պարսամեան
ձօրճ և Պէտթրիս Մ. Գասպարեան
Եղուարդ և Մարի Պոկնեան
Տիկին Լօրա Քօէս
Ֆրանք Լեոն Պէյլերեան
Տիկին Տիանա ձէպէնեան
Տէր և Տիկին Կարօ Զուսմանեան
Օշին և Հէլէն Գասպարեան
Տէր և Տիկին Միլթօն Ուիլիսմզ
Կիրականօրեայ վարժարան Լոս
Անճէլլոսի Ս. Յակոբ Եկեղեցւոյ
Օր. Ալիս Յակոբեան
Նորայր և Ալիս Մատանեան
ձիւէս և Տօրօթի Գարթըր
Օր. Ֆիօրէնա Շաղապեան
Ֆրանք և Պէթթի Սըպէքթ
Տէր և Տիկին Արա և Հերմինէ Հիտի
ձօն Քինկ Կիրակոսեան
ձօն և Քուին Փաշայեան
Յակոբ և վարդուհի Տէլլաքեան
Աւագ և Ռօզ Աւագեան
Տիկին Ռօքսի Պարսամեան

112	Լիտիա և Պարոյր Քիրէմիճեան	70
110	Տիկին Մարկարէթ Սիմոն	70
105	Կերակն. Գալոց Սան Ֆրանչիսկոյի	70
105	Տիկին Լիլիան Գ. Էթմէքճեան	70
105	Օր. Արմինէ Տէր Յակոբեան	70
100	Վանէ Զօրթեան	70
100	Արփինէ և Փիթըր Տրիվաս	70
90	Տիկին Միլինէ Մուխթարեան	70
87	Օր. Հէլէն Հանէսեան	70
77	Էնտրիս և Արեգնազ Գասպար	70
77	Տէր և Տիկին ձօրճ Էլեան	70
77	Տէր և Տիկին Արշաւիր Եղիսեան	70
77	Տէր և Տիկին ձօն Պանտուրեան	70
75	Միքայէլ Մկրտչեան	70
75	Տիկին Պէլլա Աշոտեան	65
75	Տիկին Վերոն Տաքէսեան	60
75	Տէր և Տիկին Հրանդ Սէթեան	58
75	Տիկին Վիօլէթ Թոմասեան	58
75	Տիկին Մարթա Կէնտրիս	54
75	Օր. Մերսետէս Երեցեան	38
75	Հէրրի և Մէրի Քիդլիեան	30
75	Մարթին և Վիրճինիա Թուրկեան	28
75	Հրանդ Սէթեան	14
Պ Ե Կ Ե Կ Ե Կ Ե Կ		
75	Տիկին Սօֆիա Պէլլին (Իր ութսունամ.	
73	եակին առիթով)	340
73	Լեոն Միքոնեան	300
73	Զօրայ Պէքարեան	110
72	Մօնթրէպի Հայ Տիկնանց Միութիւն	105
72	Վիգէն Ներսէսեան	75
72	Տէք. Սօֆիա Պէլլին և Գարմէն Քէթլի	70
72	Տիկին Կատար Մէնէշեան	65
72	Օր. Մէրսետէս Սարաֆեան	50
Պուէնոս Այրէսէն (Արմանքի)		
72	Քարլօս և Հիլտա Փօթլիեան	7,550
72	Գէորգ և Վերա Գարակէօզեան	6,200
72	ձօրճ և Շէյլա վարդապետեան	4,500
72	Դերձակեան Ընտանիք	750
72	Միրճեան Եղարայներ	400
72	Յարութիւն Արապեան	225
72	Յովնանէս Միլնասեան	75
70	Տէր և Տիկ. Քարլօս Պալեան (Քօրտօպա)	140
Սան Փաւլոյէն (Պրագի)		
70	Զաւէն Տէր Յարութիւնեան	430
70	Դրիգոր Միքայէլեան	430
70	Հ. Բ. Ը. Միութիւն	300
70	Տքթ. Անդրանիկ Մանիսանեան	300
70	Փառէն Պաղարեան	150
70	Էտուարտո Մէքայէլեան	150
70	Լեոն Միլթարեանի յիշատակին	150
70	Տիկին Լուսիա Միլթարեան	150
70	Պարգև Քամանեան	150
70	Համբար Առաքելեան	145
70	Ասպետ Գառնիկ Պաղարեան	145
70	Խորէն Շալիեան	145
70	Գէորգ Գուրգուսեան	145

ձող է Տիշէքէնեան	145
ձող է Սէրայտարեան	145
Գրիգոր Բարսեղեան	145
Սարգիս Բարսեղեան	145
Կարապետ Փիլափնեան	145
Արթին Սանոսեան	145
Մարաշի Հայրենակցական Միութիւն	145
Արմանաօ Շամմաս	145
Արթուր Աւետիսեան	140
Տիկին Էլիզ Պօղանեան	140
Իգնատիոս Բարսեղեան	75
Մատթէոս Սասունի Բարսեղեան	75
Գրիգոր Աբովեան	75
Կարապետ Բանջարեան	75
Մարտիրոս Մամեան	75
Խորխէ Զօհրայ Տօնէլեան	70
Զօհրայ Տօնէլեան	70

Գորագրութեան (Վեցէզուէլա)

Մանուկ Տիարպէրեան	1,400
Պատրիկ Այնաղեան	350
Նուպար և ձուան Այնաղեան	350
Տէր և Տիկին Պերճ Պղտիկեան	280
Լույս և Աննա Տօնէլեան	280
Հրանդ և Այտա Տէօփէլեան	140
Կարօ Պօտուշեան	140
Առաքել Ղազարեան	70
Ղազար Ղազարեան	70
Վարուժան Ղազարեան	70
Գրիգոր Ղազարեան	70
Իլիանա տէ Լուսի	70
ձօն Բէնթ	70
Մանուէլ Կիրակոսեան	70
Մօյզէ Թիմօնէնքի	70
Օրթո Ուրպախ	70
Էմիլիօ Փուզա	70
Ռաֆայէլ Հ. Սայազար	70
Ջարեհ Գրպրեան	70
Մովսէս Պետրոսեան	70

Լ Ո Ն Ա Ո Ն Է Զ

Միհրան և Աղնիա Լուսէֆեան Հիմնորմ.	4,000
Հայկ Ա. Ունեան	2,220
Արգարեան Աւանդի Խնամակալութ.	2,000
Հայկ Գալուստեան	220
Ստեփան Պատալեան	200
Երուանդ Լուսէֆեան	200
Տիկին Սուզաննա Քէլճիքեան	200
Հրաչ Զատրիճեան	140
Գրիգոր և Սոնիա Վարդուկեան	125
Հայկուհի և Ռիթա Վարդուկեան	125
Յ. Մութաֆեան	110
Վարդուհի և Ղուկաս Գրիգորեան	100
Թանջա Եղբայրներ	100
Ի յիշատակ Սարգիս և Աստղիկ Քիւրքեաններու	100
Գէորգ Քիւրքեան	100
Յովնանէն Քիւրքեան	100
Աւետիս և Յակոբ Քէլճիքեան	100

Ռօպէրթ Սուքիաս	100
Տիկին Յ. Արթան	80
Կարօ և Սեան Գրիգորեան	80
Օր. Սիլվիա Քարթնըր	30
Ֆրանսայէն	
Ֆրանսահայ ախտաւորներ	1,200
Պէրպէրեան - Չիլէքեան Ընտանիքներ	200
Ուղղունեան - Լքմէքեան Ընտանիքներ	30
Լ Ի Ղ Վ Ո Ն Է Զ	
Գալուստ Կիւլպէնկեան Հիմնորմ.	6,300
Ժ Բ Ե Լ Է Զ	
Տիկին Փինէրէթ	140
Աւստրալիայէն	
Ստեփան Բանիկեան	287
Արթըր և Լօրէյն Բանիկեան	200
Տիկին Մէրի Քէօրօլլանեան	100
Տէր և Տիկին Խաչիկ Տիքպիքեան	85

Երուսաղէմէն

Կրթական Նախարարութիւն	
(Երբայեղէնի ուսուցման համար)	2,366
Արդար Զաքարեան	650
Յուլիա և Ալէկսա Մամեան	500
Յակոբ Եւօնէլեան	300
Հայ Օղնուլեան Միութիւն	150
Վարուժան Տիւրատուրեան	140
Ունեւորու	94
Տիկին Սիլվա Հայրապետեան	60
Տարւոյս ընթացքին Ա. Թարգմանաց	
Նիկ. Վարժարանի տնօրէն Հիմնա-	
դրամին եղած Գուրաւորութիւններ	
Արմէն և Նելլի Զիննօղեան (Պ. Այրէս)	15,000
Արտաշէս և Սոնիա Սարեան	
(Գանատա)	9,300
Վարդգէս Երէցեան (Գարագաս)	6,000

Մեր նուիրատուներու այս ցանկէն յետոյ պիտի ուղէինք մասնաւոր կերպով յիշատակել տնուները կրթասէր ու ազգանուէր այն բարերարներուն, որոնք իրենց և կամ իրենց ընտանիքներու տնուներով մասնաւոր դատարաններ կը պահեն մեր վարժարանէն ներս:

Որդիական ակնածանքով, սիրով և երախտագիտութեամբ կը յիշատակենք Ազգիս Վեհափառ Հայրապետը՝ Տ. Տ. Վազգէն Ա. Սրբազնագոյն Կաթողիկոսը Ամենայն Հայոց, որուն հայրական կտրգադրութեամբ մեր վարժարանը օգտուեցաւ Լոնտոնի Արգարեան Աւանդէն տրամագրուած 1000 Սթերլինկի նպաստով:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք նաեւ Աւանդի Մարմնոյն բոլոր յարգարժան անդամներուն:

Երախտագիտութեամբ կը յիշատակենք Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութեան արժանընտիր Նախագահ Տիար Ալեքս Մանուկեանը և իր Տիկին Մարին, որոնք նախընթաց տարիներու նման այս տարի ևս մեր կրթական գործին օժանդակչին 6000 Տոլարի նուիրատուութեամբ: Դարձեալ Նորին Վսեմութեան կարգադրութեամբ, վարժարանս տարեկան 1000 Տոլարի օժանդակութեամբ կը նպաստուորուի Հ. Բ. Ը. Մ. - Փիթըր և Էլիզապէթ Թորոսեան կրթական Հիմնադրամէն: Այս առթիւ շնորհակալութեամբ կ'ազգենք յիշատակել թէ Նորին Վսեմութիւնը և Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնական Վարչութիւնը ամէն տարի, ընդառաջելով մեր խնդրանքին, կը բարերարեն մեր շրջանաւարտ աշակերտները կրթական թոշակներով, անոնց համալսարանական դաստիարակութեան համար:

Երախտագիտութեան խօսք ունինք Լիզպոնի Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան, որ նախընթաց տարիներու նման այս տարի ևս օժանդակեց մեր վարժարանին 4420 Տոլարի յատկացումով մը:

Սրտագին երախտագիտութեան զգացումներ ունինք Հարուայի Ամերիկայէն Տիար Էտուարտո Ալֆէրեանի և իր ազնւեալ քրոջ՝ Տիկին Ատրինէ Վարդպարսեանին, որոնք տարեկան չօշափելի նուիրատուութեամբ մը նրկու դասարաններ կը պահեն իրենց զերդաստաններու անունով: Անոնք նաեւ տարիներ առաջ իրենց մօր՝ Բէթթրի և իրենց ամուսնոյն՝ Գէորգի մահուան առիթով հաստատեցին Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի անունով Հիմնադրամ մը, որուն գումարը հասած է այսօր, տոկոսներով միասին, 27,016,47 Տոլարի, որուն հասոյթը կը յատկացուի վարժարանիս ընդհանուր պիտէի հաւատարակութեան, Երկնային հանգիստ իրենց ննջեցեալներու հոգիներուն:

Սորին շնորհակալութեամբ կը յիշատակենք որ Տիկին Վարդպարսեանի դուստր և հարսը՝ Գէորգ և Շիլլա Վարդ-

պարսեաններ, այցելեցին Երուսաղէմ և եղան ակնատես մեր կրթական գործունէութեան, ու անով խանդավառ, հետեւելով իրենց բարի մօր օրինակին, իրենց անունով դասարան մը կը պահեն մեր վարժարանէն ներս, որուն համար այս տարի կ'ատարած են 3000 Տոլարի նուիրատուութիւն մը:

Շնորհակալութեան սրտագին զգացումներով կը յիշատակենք Գոնատայէն Տէր և Տիկին Արտաշէս և Սօնիա Սարեանները, որոնք տարեկան 6000 Տոլարի նուիրատուութեամբ դասարաններ կը պահեն իրենց հանգուցեալ մօր՝ Տիկին Արշալոյս Զրուանդեանի և իրենց հանգուցեալ ազգականին և մեր վարժարանի նախկին բարերարին՝ Կոպիտիկ Ալֆէրեանի յիշատակին: Անոնք տարիներ առաջ բացառիկ յատկացումով մը հաստատած են Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանի Արտաշէս և Սօնիա Սարեան Հիմնադրամը, որ այժմ հասած է 33,292,01 Տոլարի: Սրտագին ալօթք ունինք իրենց ննջեցեալներու հոգիներուն հանգստեան համար:

Սրտաբուխ շնորհակալութիւններ հայրենասէր Վենեզուէլահայ Տիար Վարդգէս Երէցեանին, որ տարեկան 4000 Տոլարի օժանդակութեամբ դասարան մը կը պահէ, յանուն իր հանգուցեալ Տիկնոջ՝ Էլիփի Երէցեանի: Ասկէ զատ, Տիար Երէցեան իր սիրելի տիկնոջ մահուան առիթով հաստատեց ի նպաստ Ս. Թարգմանչաց Երկր. Վարժարանին Վելիփ Երէցեան կրթական Ֆոնտը, որ տոկոսներով միասին այսօր հասած է 51,597,51 Ամեր. Տոլարի: Կ'աղօթենք սրտագինս իր հանգուցեալ Տիկնոջ հոգւոյն ի հանգիստ:

Երախտագիտութեան խօսք ունինք Ամերիկահայ մտաւորականին՝ Բանասէր-դրամադէտ Սեբաստացի Տէր և Տիկին Փօլ Զարեհ Պաուկեաններուն, որոնք տարեկան 2500 Տոլարի նուիրատուութեամբ կը բարերարեն մեր Մանկապարտէզը, որ իրենց հանգուցեալ մօրաքրոջ անունով կը կոչուի Վանիա Տ. Մեսրոպեան Մանկապարտէզ: Անիկա եղած է Սեբաստիոյ առաջին Մանկապարտիզպանուհին: Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Շնորհակալութեան փերմէ սրտագին խօսքեր Հասարակ Գարակէօղեան Հիմնարկութեան և անոր համեմատաբար Նախագահներին՝ Օր. Լէյլա Գարակէօղեանին, որուն բարեհաճ կարգադրութեամբ դասարան մը կը պահուի մեր վարժարանէն ներս, յանուն հանգուցեալ Հասարակ Գարակէօղեանի, տարեկան 5000 Տոլարի յատկացումով: Օր. Լէյլա շատ սերտօրէն կ'ապուած է Ս. Թարգմանչաց մեր կրթական հաստատութեան, ինչ որ մեզ համար բարոյական ազնիւ խթան մըն է:

Սրտագին շնորհակալութիւններ Ամերիկայի Տիար Ռիչըրտ Կրէկօրիին, որ նախորդ տարիներուն նման այս տարի ևս շարունակեց պահել դասարան մը, նախընտրած իր հանգուցեալ մօր՝ Տիկին Ալիս Գարագաշեան - Կրէկօրիի քաղցր յիշատակին, որուն համար կատարեց 2200 Տոլարի նուիրատուութիւն մը: Կ'աղօթենք իր բարի մօր հոգւոյն հանգստեան համար:

Երախտագիտութեամբ կը յիշատակենք մեր բարերարներէն Տէր և Տիկին Սուրէն Ֆէօճեանները, որոնք տարեկան 4000 Տոլարի նուիրատուութեամբ դասարաններ կը պահեն մեր վարժարանէն ներս, իրենց և իրենց զուակներու՝ Ռօպէրթի և Սիլվիոյի անուններով: Պր. Ֆէօճեան սրտագին սիրով կ'ապուած է մեր վարժարանին և իր կարելին ի գործ կը դնէ ոչ միայն անձնապէս օգտակար ըլլալու մեզի, այլ և իր բարեկամներու լայն շրջանակէն ներս ան փառադպիք է մեր կրթական գործին, որպէսզի անոնք ևս բերեն իրենց ազնիւ մասնակցութիւնը մեր կրթական ճիգերուն:

Այս առթիւ յատկապէս յիշատակելի է երուսաղէմի Պատրիարքութեան Բարեկամներու կազմակերպութիւնը, որուն գլխաւոր վարիչ ղէմքն ու գործադրողն է Տիար Սուրէն Ֆէօճեան: Այս կազմակերպութիւնը ինչպէս նախընթաց տարիներուն, այս տարի ևս բերու իր նպաստը մեր վարժարանին՝ 10,000 Տոլարի նուիրատուութեամբ մը, որուն մէկ մասը արդէն հասած է մեզի: Սոյն կազմակերպութիւնը իր գործակցութիւնը կը բերէ նաև մեզի փոխանցելով մեր կարգ մը նուիրատուներու նուիրատուութիւնները:

Մեր կրկնակի շնորհակալութիւնները կազմակերպութեան բոլոր անդամներուն, ինչպէս նաև Տիար Սուրէն Ֆէօճեանին:

Շնորհակալութեան սրտագին պատգումնիք Լոսանջէսի Հայ ազգայիններէն Տիար Երուանդ Էստէֆեանի, որուն կեղծէ հաստատուած «Միհրան և Ազնիւ Էստէֆեան» Հիմնարկութիւնը 2000 Տոլարի նուիրատուութեամբ այս տարի ևս շարունակեց բարերարել դասարան մը, որ կը կոչուի «Միհրան և Ազնիւ Էստէֆեան» դասարան: Շնորհակալութիւններ նաև Հիմնարկումի Եանձնախումբի անդամներուն: Թող Աստուած իր երկնաւոր թագաւորութեան մէջ հանգչեցնէ ծնողաց՝ Ազնիւի և Միհրանի, և Կարապետ և Յակոբ եղբայրներուն հոգիները և արեւշատ օրեր պարգևէ մեր բարերարին՝ Տիար Երուանդ Էստէֆեանին:

Սրտագին շնորհակալութիւններ Տիար Սուրէն Տէր և Տիկին Եղուարդ և Հէլէն Մարտիկեան ամուլին, որոնք տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կը բարերարեն «Էտուրտ և Հէլէն Մարտիկեան» դասարանը, իրենց նուիրատուութեան հետ յայտնաբերելով միշտ ալ ազնիւ և հոգածու սէր մը հանդէպ մեր դպրոցին:

Խորազգած շնորհակալութիւններ Ամերիկայի մեր թանկագին բարեկամներէն շնորհալի զոյգին՝ Տէր և Տիկին Էտուրտ և Սթօմի Փանոսեաններուն, որոնք այս տարի ևս 1500 Տոլարի նուիրատուութեամբ շարունակեցին պահել «Էտուրտ և Սթօմի Փանոսեան» դասարանը:

Մեր սրտագին շնորհակալութիւնները Հարաւային Ամերիկայի մեր բարեկամներէն Տէր և Տիկին Գէորգ և Վերա Գարակէօղեաններուն, որոնք նախընթաց տարիներու նման այս տարի ևս շարունակեցին բարերարել «Գէորգ և Վերա Գարակէօղեան» դասարանը՝ 4000 Տոլարի նուիրատուութեամբ մը:

Դարձեալ Հարաւային Ամերիկայի մեր կրթաւէր ազգայիններէն Տէր և Տիկին Քարլօս և Հիլտա Փօթիքեաններ 3000 Տոլարի նուիրատուութեամբ բարերարեցին մեր վարժարանը, նախընթաց տարիներու նման պահելով դասարան մը,

նուիրառած իրենց հանգուցեալ հօր՝ Միհրան ֆոթիքեանի յիշատակին: Տէրը լուսաւորէ իրենց հօր հոգին: Մեր սրտագին շնորհակալութիւնները այս շնորհալի զոյգին:

Սրտագին շնորհակալութեամբ կը յիշատակենք Ամերիկահայ պատուական զոյգը՝ Տէր և Տիկին Ռիչըրտ և Կլօրիա Մանտեսանները, որոնք այս տարի ևս 1000 Տոլարի սրտաբուխ նուիրատուութեամբ շարունակեցին պահել «Մանտեսան դասարան»ը:

Շնորհակալութեամբ կը յիշատակենք Լոնտոնէն Տիար Հայկ Ա. Ունճեանը, որ այս տարի ինքնաբեր մղումով յանձն առաւ բարերարելու դասարան մը մեր վարժարանէն, որ պիտի կոչուի «Հայկ Ա. Ունճեան դասարան», տարեկան 1000 Սթերլինի նուիրատուութեամբ: Տիար Ունճեան պատրաստակամութիւն յայտնած է նաև օժանդակել մեր երաժշտական և գիտական դասընթացներուն:

Երախտագիտութեան սրտագին զգացումներով կը յիշատակենք Հարաւային Ամերիկայէն Տէր և Տիկին Արմէն և Նէլլի Զիննօգեաններ, որոնք անցեալ տարի իրենց Երուսաղէմ այցելութեան առիթով եղան մեր կրթական հաստատութենէն ներս և խանդավառ մեր աշակերտներով և մեր կրթական գործունէութեամբ, կատարեցին 10,000 Տոլարի Անշարժ Հիմնադրամի խոստում մը, որուն տարեկան հասոյթը պիտի յատկացուի դասարանի մը, որ պիտի կոչուի «Արմէն և Նէլլի Զիննօգեան դասարան»: Տարւոյս ընթացքին արդէն իսկ ստացուած է սոյն հիմնադրամ - զուեմարը խորին շնորհակալութեամբ: Այս առթիւ ցաւով կ'անդրադառնանք որ Պր. Զիննօգեան վերջերս դժբախտութիւնը ունեցած է կորսնցնելու իր եղբայրը՝ ազգային բարերար Վահէ Զիննօգեանը: Մեր ցաւակցութիւնները և աղօթքը Վահէի հոգւոյն երկնային հանգիստին համար:

Ջերմ շնորհակալութիւններով կը յիշատակենք Ամերիկայի Համասերաստանայ Վերաշինաց Միութեան պատ. Կեդրոնական Վարչութիւնը, որ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ կ'օժանդակէ մեր կրթական միասնին, բարերարելով

դասարան մը յանուն Սերաստիոյ Ս. Նշան Վանքին: Կը յուսանք շուտով ստանալ իրենց նուիրատուութիւնը:

Նախանցեալ տարի Ամերիկահայ Տէր և Տիկին Գրիգոր և Սօնա Ասատուրեաններ, իրենց Երուսաղէմ այցելութեան առիթով եղան մեր վարժարանէն ներս և ուսումնասէր Հայու խանդով ականատես եղան վարժարանիս կրթական գործունէութեան ու այդ օրէն ի վեր անոնք դասարան մը կը պահեն «Գրիգոր և Սօնա Ասատուրեան դասարան» անունով: Ջերմագին շնորհակալութիւններ կրթասէր ամուսին:

Գալիֆօրնիայի Տէր և Տիկին Ճան Կապրիէլ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ դասարան մը կը բարերարեն մեր վարժարանէն ներս, որ կը կոչուի իրենց գերդաստանի անունով: Կը յուսանք շուտով ստացած ըլլալ իրենց նուիրատուութիւնը:

Հարաւային Ամերիկայէն Տիար Մանուկ Տիարպէթիրեան տարեկան 1000 Տոլարի յատկացումով մը կը պահէ դասարան մը, Տիարպէթիրեան Սարգիս և Յովհաննէս հանգուցեալ եղբայրներու ի յիշատակ: Շնորհակալութիւն ազնիւ նուիրատուին և հանգիստ հոգւոյ Տիարպէթիրեան ընտանիքի նշնեցեալներուն:

Մեր նախկին սաներէն Տէր և Տիկին Գրիգոր և Յասմիկ Մատուրեաններ տարեկան 1000 Տոլարի նուիրատուութեամբ դասարան մը կը բարերարեն իրենց գերդաստանի անունով: Կը յուսանք շուտով ստանալ իրենց նուիրատուութիւնը: Շնորհակալութիւն մեր երախտագէտ սաներուն:

Նահապակ զրազէտ Գրիգոր Զօհրապի դուստրը՝ Տիկին Տօյօրէս Լէյպման, Հ. Բ. Ը. Միութեան միջոցաւ ամէն տարի կանոնաւորաբար նուիրատուութիւն մը կը կատարէ մեր դպրոցին: Մեր վերմ շնորհակալութիւնները:

Տարւոյս ընթացքին շատ խոր ցաւով վերահասու եղանք մեր նախկին արժանաւոր սաներէն Յակոբ Նաղըրեանի մահուան ախուր լուրին: Հայ Երուսաղէմի ընտիր զաւակներէն էր Պր. Նաղըրեան և իր անժամանակ մահը իսկական կորուստ մը: Հանգուցեալը իր կենդանութեան

Հիմնադրամ մը հաստատած էր իր հանգուցեալ մօր անունով, որուն տոկոսը ամէն տարի 90 - 100 Տօլար կը յատկացուի մեր վարժարանին: Իր համեստափայլ կինը՝ Տիկին Արտեմիս նամակով մը կ'իմացնէր մեզ շտաբ մը առաջ թէ իր մահուան առիթով փոխան ծաղկեպսակի կտաւարուած նուիրատուութիւններուն կէսը (մօտ 4000 Տօլար) պիտի յատկացուի մեր վարժարանին: Մեր ցաւակցութիւններուն հետ մեր սրտագին շնորհակալութիւնները: Աստուած լուսաւորէ մեր շատ սիրեցեալ սանին՝ Յակոբի հոգին և մխիթարէ իր ընտանեկան պարտքաները:

Դարձեալ ցաւով կ'արձանագրենք մահը մեր գլորոցի բարերարներէն Օր. Արշա Սարգիսեանի, որ սրտովին կապուած էր մեր վարժարանին տարիներէ ի վեր, այն օրէն երբ առաջին անգամ կ'այցելէր Եւրուսղէմ: Իր ընկերուհիները իր մահուան ախար առիթով «փոխան ծաղկեպսակի» նուիրատուութիւններէ գոյացած գումարը, 525 Տօլար, փոխանցեցին Ս. Թարգմանչաց Վարժարանին, ինչպէս նաև իր յիշատակին յանձն առին հոգալ քանի մը սաներու ուսումնական տարեթուականը: Ազօթեցինք ու տակաւին պիտի շարունակենք ազօթել իր հոգւոյն երկնաւոր հանգիստին համար:

Խոր ցաւով կը յիշատակենք նաև մահը մեր նախկին աշակերտներէն Անի Պէրպէրեանի, որ տեղի ունեցած է Լոս Անճէլէսի մէջ, դժբախտաբար իր շատ երիտասարդ տարիքին: Կապուած էր մեր վարժարանին շատ խոր սիրով, որուն կրթական գործին բարեսիրտ նուիրատուներէն էր: Մեր ցաւակցութիւնները իր մօր և իր քոյրերուն՝ Նոյեմին և Մէրիին: Կ'ազօթենք սրտագինս թէ՛ նորոգ հանգուցեալ Անիին և թէ իր հօր՝ Յովհաննէսի (մահացած անցեալ տարի) հոգիներուն հանգստեան համար:

Այստեղ խորին շնորհակալութեամբ կը կատարենք յիշատակութիւնը նաև այն նուիրատուներուն, որոնք 500 Տօլարի և անկէ վեր նուիրատուութիւններ կատարած են: —

Ամերիկայէն, Ս. Թարգմանչաց Երկ. Վարժարանի նախկին սաներ՝ 1000 Տօլար:

Ամերիկայէն, Տքթ. և Տիկին Էտմօն և Մարկարիթ Կօրէք՝ 900 Տօլար:

Ամերիկայէն, Օր. Քարէն Տէտերեան՝ 800 Տօլար:

Ամերիկայէն, Տիար Եարութիւն Ա. ստուերեան (Mr. Harry Astor)՝ 650 Տօլար:

Ամերիկայէն, Տէր և Տիկին Տիգրան Մարլեան և Աղապապեան Ընտ.՝ 550 Տօլար:

Ամերիկայէն, հանգուցեալ Օր. Արշա Սարգիսեանի ընկերուհիներ, «փոխան ծաղկեպսակի»՝ 525 Տօլար:

Ամերիկայէն, Տիար Էլէէրէթ Պէրպէրեան՝ 500 Տօլար:

Պուէնս Լայթսէն, Դերձակեան Ընտանիք՝ 500 Տօլար:

Շնորհակալութեամբ կը յիշատակենք նաև անունները այն ազնիւ անձնաւորութիւններուն, որոնք կրթաւէր ու ազգանուէր ապրումներէ թելադրուած, իւրաքանչիւրը իր քաղաքին և ընկերային շրջանակին մէջ, գլորոցաւէր անհատներէ ի նպաստ վարժարանիս նուիրատուութիւններ ապահոված են: Այսպէս, Ամերիկայէն՝ Համեստափայլ Տքթ. Բերկրուհի Սվաճեան, Արթ. Տ. Վարդան Քնյ. Գասպարեան, Արթ. Տ. Արշէն Քնյ. Այվազեան, Գարագասէն՝ Տիար Պատրիկ Այնազեան, Սան Փաւլոյէն՝ Ասպետ Գառնիկ Պազարեան, Տիար Զուէն Տ. Եարութիւնեան, Արթ. Տ. Եզնիկ Քնյ. Կիզէլեան:

Շնորհակալութեան սրտագին պարտք ունինք «Արտասահմանի Հայերի հետ Մշակութային կապ»ի կազմակերպութեան և անոր արժանաւոր Նախագահին՝ Տիար Կարլէն Տէլլաքեանին, որոնք մասնաւոր հոգածութեամբ վարժարանս կը ստանայ դասագիրքեր Հայերէն լեզուի, գրադարանային գիրքեր և հայրենական թերթեր, ինչ որ մեզի համար անփոխարինելի քաջալերութիւն մըն է ու մեծ նպաստ մեր կրթական ճիգերուն:

Շնորհակալութիւն նաև Ամերիկայի «Պայքար» և «Ասպարէզ» թերթերու իրմարտութեանց, որոնք սիրալոյսով կը տրամադրեն մեր վարժարանին իրենց թերթերը:

Մեր սիրոյ և յարգանքի և ամենէն սրտագին շնորհակալութեան պարտքը ունինք Զեղդ Սրբազնութեան, Ամեն. Ս.

ՏԱՐԵԿԱՆ ԶԱՆԴԻՍՈՒԹԻՒՆՔ Ս. ԹԱՐԻՄԱՆԶԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

31 Մայիս, Կիրակի կէսօրէ ետք ժամը 4ին, Ժողովուրդային Վարժարանի հանդիսարանին մէջ կայացաւ Ս. Թարգմանչաց Մանկապարտէզի Ամսվերջի Հանգէսը, նախագահութեամբ Վարժարանի բազմամեայ և բարեջան Տեսուչ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գործիկեանի, Ներկայ էին Հոգշ. Հայրեր և բազմաթիւ ժողովուրդ:

Խնամքով պատրաստուած յայտագիրը կը բաղկանար երգերէ, հայկական պարերէ, արտասանութիւններէ և արամաիստութիւններէ, բոլորն ալ յաջողապէս կատարուած Մանկապարտէզի և Նախակրթարանի Ա. դասարանի փոքրիկներուն կողմէ: Երեք ժրջան Վարժուչիները ոչինչ խնայած էին Հանգէսի յաջողութեան համար:

Հանգէսի աւարտին, Տեսուչ Սրբազանը բաժնեց վկայականները Մաղիկ դասարանէն ընթացաւարտ 13 երկսեռ փոքրիկներուն և «Պահպանիչ»ով ու Տէրունական Աղօթքի երգեցողութեամբ փակեց հանգէսը:

Յաջորդ Կիրակի, 7 Յունիս, երկուշեան ժամը 6 30ին, Սրբոց Թարգմանչաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ Երկրորդական բաժնի Ամսվերջի Հանգէսը, ղարձեալ նախագահութեամբ Վարժարանի Գերաշնորհ Տեսչին, Մնողքներ և հրաւիրեալներ լեցուցած էին սրահը զրեթէ ամբողջութեամբ:

Այս տարուան Հանգէսը նուիրուած էր մեր Պատմահօր՝ Մովսէս Խորենացիի, անոր մահուան 1500ամեակին առիթով: Շրջանաւարտ սաներ խօսեցան անոր կեանքին ու գործին մասին, կարելի յաջողութեամբ: Աշակերտներ երգեցին հայրենական երգեր: Եղան նաև արտասանութիւններ, տաւնձին ու խմբական:

Հանգէսի երկրորդ բաժնին մէջ կատարուեցաւ բաշխուած վկայականներու և մրցանակներու: Տեսուչ Սրբազանը կարգաց մասեր իր Տեղեկագրէն: Երգուեցաւ, ըստ սովորութեան, Հրաժեշտի երգը, դաշն ու քաղցրահունչ: Շրջանաւարտներէն մին կարգաց խնամեալ ուղերձ մը, պահէն թելագրուած յուզականութեամբ յագեցուն: Գերշ. Տեսուչը իր փակման խօսքին մէջ յորդոր սեղոյից իրենց զաւակները օտար վարժարան զրկող ծնողքներուն, որ վերաբնեն իրենց կեցուածքը, քանի որ Թարգմանչացը օտարին տուածը ապով միասին, կու տայ նաև հայադիտական դասեր, ա՛յնքան կենսական հայապահպանման մեր գոյապայքարին մէջ: Հանգիստութիւն մը նշմարելով Պենտեկոստէի օրը (այդ օր տօնն էր Հոգեգալստեան) առաքեալներուն ստացած Ս. Հոգիի շնորհքին և ընթացաւարտներուն մեր վարժարանէն ստացած հայեցի առողջ ոգեկանութեան միջև. յորդորեց այս վերջինները որ առաքեալներուն նախանձախնդրութեամբ լեցուած՝ ըլլան տարածիչներ այդ ոգեկանութեան, ուր որ ալ նեւէ գիրենք անգութ ճակատողիւրը Հայուն:

Պատրիարք Հայր, որ իրեն Գահակալը Երուսաղէմի Աթոռին և պետր Ս. Յակոբեանց Միաբանութեան, գերագոյն տեսուչը, անօրինողն ու հագառարն էք Սրբոց Թարգմանչաց Վարժարանին, լոյսի և յոյսի այս Տան, ուր կը դարբնուին մատուցալ հոգիները մեր գաղութի նորահաս սերունդին, որ պիտի ըլլայ մեր ժողովուրդին վաղը, ապագան: Շնորհակալութիւն նաև անոր համար, որ այս նուիրական գործին ղեկավարութիւնը վստահած էք մեզի:

Մեր Տեղեկագրին հետ Զեզ կը ներկայացնենք այստեղ տարւոյս մեր 6 շրջանաւարտները, որպէսզի անոնց վկայականներուն հետ շնորհէք նաև Զեր Հայրական օրհնութիւնները, որպէսզի անոնք ըլլան ծառաներ բարի և հաւատարիմ մեր ժողովուրդի ծառայութեան սուրբ սեղանին:

Եղբայրական քերական սիրով
խոնարհ աղօթակից
ԿԻՐԵՂ ԵՊՍ. ԳՈՐԺԿԵԱՆ
Տեսուչ Ս. Թ. Երկ. Վարժարանի